

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ ՎԱՃԱՐԿԵՐԸ<sup>1</sup>  
ԵՎ ՌԱՐԱՅԻՆ ՀԵՂԱՎԿԱՐՆԵՐԸ<sup>2</sup>

ARMENIAN STUDIES TODAY  
AND DEVELOPMENT  
PERSPECTIVES

Միջազգային համաժողով  
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.  
International Congress  
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու  
Collection of papers



## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՐԱԿԱՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԹՉԱՅՆԻ ԴԿ ԴԱՐՁՎԱԾՔԻ ԱՌԵԴՎԱԾԸ

Աննա Արևշատյան  
Դայաստան

Դայ միջնադարագիտության մեջ առ այսօր չի արժարծվել դեռևս V դարում հայ միջնադարյան գրականության մեջ որպես ինքնուրույն տեսակ ծևափորված վկայաբանության՝ և շարականերգության միջև գոյություն ունեցող կապը, չի քննվել մարտիրոսության թեմայի արտացոլմբ հայ հոգևոր երգաստեղծության մեջ:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում հերոս-նահատակներին նվիրված օրիներգերը: Արդյոք օժտված են ինչ-որ առանձնահատուկ գժերով:

Այդ կարգի առավել վաղ ստեղծագործությունը, որի ստեղծման տարեթիվը ստույգ հայտնի է (618թ.), սրբոց Յոհիվսիմեանց հիշատակին ծոնված Կոմիտաս Աղցեցու «Անձինք նուիրեալք» կացուրդ կոնդակն է, որն առաջին անգամ հնչել է սր. Յոհիվսիմե եկեղեցու օծման արարողության ժամանակ: Ազարանգեղոսի վկայությամբ, այդ տեղում Գրիգոր Լուսավորիչն ի մի է բերել և հողին հանձնել սուրբ վկայութու մասունքները՝ վրան կառուցելով մի համեստ վկայարան, որը հետագայում վերակառուցվել է Սահակ Պարթև կաթողիկոսի օրոք<sup>2</sup>: Աղցեցու շարականն առաջին օրինակն է հայ շարականերգության մեջ, որտեղ կիրառվել են ասորական մադրաշայի և բյուզանդական կոնտակիոնի ավանդույթները: Այն գրված է շեշտական տաղաչափությամբ և այբբենական ակրոստիքոսով: Դառնալով չափանմուշային կարող, «Անձինք նուիրեալք» շարականը սկիզբ դրեց մի ուշագրավ ավանդույթի: այն է, ազգային սուրբ նահատակների օրինաբանությունը հայկական Ութձայնի Դկուում, իսկ այբբենական ծայրակապով գրված նմանատիպ երգասացություններն այդուհետ սկսեցին կոչվել ըստ ներբողի սկզբնաբառի «Անձինք»:

Տվյալ հանգամանքը արժանի է հատուկ ուշադրության: Քրիստոսի սիրույն նահատակած ազգային մարտիրոսներին ծոնված շարականների ձայնեղանակային պատկանելության ուսումնասիրությունը բացահայտեց բնորոշ մի օրինաչափություն՝ ազգային հերոս-նահատակներին նվիրված բոլոր շարականները, որպես կանոն, ծավալվում են Դկուում դարձվածք կամ Դկուում ստեղի ձայնեղանակներում:

Ի՞նչն է այս կայուն ավանդույթի պատճառը, ավանդույթ, որն ստացել է յուրահատուկ կանոնի նշանակություն:

Դայտնի է, որ հայ միջնադարյան երաժշտական տեսության մեջ Դկուում եղանակն ավանդաբար կոչվում է Վերջին, այսինքն Ութձայնի հիմնական եղանակների անվանացանկն ամփոփող: Ուշագրավ է, որ օրինակ, «Զայնից գիւտ ըստ փիլխոփայից» հնագույն պատառիկում և Յայսմավուրքի սրբոց թարգմանչաց հիշատակի ընթերցման մեջ Ղկ-ը, որը կրում է «Ութերորդ» անվանումը, դեռևս չենթարկվելով Ութձայնի ընդհանրացված ներքին ստորաբաժանմանը, ըստ անանուն հեղինակի մեկնության, առաջացել է «յանասնոց»: Արդյո՞ք դա եկեղեցական աստվածաբա-

նության կողմից հերանոսական զոհի վերափոխումը չէ հանուն գիտակցված զոհաբերության բարձրագույն գաղափարի, Միածին Աստծո, որը խաչի վրա հոժարակամ նահատակվեց մարդկության մեղքերի բավության համար: Գաղափար, որն ընկած է մարտիրոսության իրու երևույթի հիմքում:

Սովոր Քերոն Սյունեցու «Յաղագ կարգաց Եկեղեցւոյ» մեկնության մեջ Դ կողմը բնորոշվում է որպես «ուրախալից ծայն, սովու շարադրեցան ստողոզիակամբ Սաղմոսք ի սուրբ Պատրիարքին, ի Յարութեանն Քրիստոսի»: «Իսկ վերջին ստեղն՝ պատրաստ սիրելեաց իւրոց բաժակ փրկութեան եւ անմահութեան յարքայութեան երկնից»<sup>3</sup>:

Ստեփանոս Սյունեցուն վերագրվող «Յաղագ ծայնից» գրվածքում տրված է Դկ-ի բոլորովին ուրիշ մեկնություն: «Չորրորդ ծայնի կողմն հատեալ է վծիռ դատաստանի, զի անդարձ կորստեան հանդիպին մեղաւորքն ի յաւիտենից տանջանս»<sup>4</sup>:

Այս երկու մեկնություններում կարծես հակադրվում են տվյալ ծայնեղանակում առկա մեղեդային արտահայտչականության փոփոխական շեշտով բնորոշվող Դկ-ի ծայնակարգային տարրեր (մեծալար՝ օրինաբանական և փոքրալար՝ մոայ) ուրոտները:

Այլ կերպ է մեկնում Դկ Եղանակի խորհուրդը Անանիա Նարեկացին «Յաղագ գիտութեան ծայնից» գրվածքում: «Չորրորդ կողմ՝ զտաճարին պղծիլն սրբին: Նովին Եկեղեցօրիններն եւ խաչօրիններն: Իսկ ստեղն՝ Եսայի լուաւ զսրովքից սրբասացութիւն»<sup>5</sup>: Մեջքերված մեկնությունները վկայում են, որ այդ գրավոր աղյուրները ոչ թե մտացածին, զուտ աստվածաբանական-խորիրաբանական տարրերով հագեցված երկասիրություններ են, որտեղ դժվարությամբ կարելի է զատորոշել Եկեղեցական երգաստեղծության տեսության ու գեղագիտության առնչվող առանձին ասուլեր, այլ կրում են իրենց մեջ առաջին հերթին քրիստոնեության կողմից երաժշտական երոսի մասին վերահնաստավորված ամսիկ ուսմոննը և երկրորդ իրենցից ներկայացնում են ինչպես էղորերիկ, այնպես էլ գործնական անհրաժեշտ գիտելիքների հանրագումարը, որը կազմում է միջնադարյան մտածողության անքակտելի մասը:

Ոկ դարձվածքն ընդհանուր առմամբ բնորոշվում է խիստ, մի փոքր ասկետական, բայց միաժամանակ լուսավոր երանգավորումով, որը հատկանի ընդգծվում է ծայնեղանակի երրորդ իշեցված և երրորդ բնական աստիճանների փոփոխականությամբ: Մեծացրած սեկունդայի առկայությունը հիմնական քառալարին հարող ներքելի քառալարում նրան հաղորդում է ազգային վառ արտահայպած երանգ: Դ կողմ դարձվածքի հնչյունակարգը հետևյալն է: C<sup>1</sup>-des[δ<sup>1</sup>]-e<sup>1</sup>-F<sup>1</sup>-g<sup>1</sup>-[as<sup>1</sup>]-a<sup>1</sup>-b<sup>1</sup>-c<sup>2</sup>, որի մեջ C<sup>1</sup> և F<sup>1</sup> հնարավոր հիմնածայներն են, իսկ g<sup>1</sup>- դիմող ծայնն է: Ն. Թահմիզյանը ծիշտ է նկատել, որ «Կոմիտաս Աղցեցին Յոհվասիմեանց կույսերին նվիրված իր հայտնի ներբողով ստեղծել է քնարական-էպիկական բնույթի և բովանդակության պոեմի այնպիսի չափանմուշ, որ հետագայի հեղինակները, դիմելով այդ տիպի օրիներգին, չին կարող անջատել ծայնեղանակը մարմնավորման մնացած արտահայտչամիջոցներից, որոնք օրգանական ամբողջություն էին ներկայացնում»<sup>6</sup>: Կոմիտաս Աղցեցու ներբողի օրինակով գծված ստեղծագործությունների շարքում, ժամանակի առումով նրան առավել մոտ է Ղավթակ Քերորողի «Ողքը ի մահն Զուանչիրի մեծն իշխանին» պրեմը (670 թ.), որն ինչպես և Կոմիտաս Աղցեցու շարականը, գրված է այբբենական ակրոստիքոսով: Զուանչիր իշխանի մասին տեղեկություններ է հաղորդում VII դ. պատմագիր Մովսես Կաղանկատվացին իր «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ<sup>7</sup>: Նույն տեղում բերված է նաև Ղավթակ Քերորողի «Ողքը»<sup>8</sup>: Ելնելով վերը նշվածից, Թահմիզյանը ենթադրում է, որ Ղավթակ Քերորողի Ողքը պետք է երգվեր Դ կողմ ծայնեղանակի դարձվածքում (նա ճշտում

է Դ դարձվածքում) և այնուհետև կատարում Ղավթակի Ողքի մեղեդու վերականգնած մի փորձ նշված ձայնեղանակին բնորոշ ելեւների շրջանակներում:

Յիշտակության է արժանի նաև IX-X դդ. պատմագիր Թովմա Արծրունու հաղորդածն այն մասին, թե ինչպես Ապումուսե սպարապետի որդի Մուշեղ Բագրատունին, մի բլից վրա նստած, դիտում էր հայոց զորքի և արաբների թեժ ճակատամարտը, և որն ուսմամբ «Եր վարժեալ Աստուածական իրահանգին եղ առ յայն ժամու իմացական տեսությունն զերզ որոյ սկիզբն է Անգբաղել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանգամ գալուստն, և տուն ի յութերորդ վանգէ»<sup>9</sup>, այսինքն Ութերորդ ձայնեղանակում:

Ժամանակագրական առումով հայ հոգևոր երգարվեստի այդ տիպի հաջորդ հայտնի ննուշը 737 թ. գրված կին երգահան Խոսրովիդուխտի «Զարմանալի ի ինձ» Ողբեր է կամ Գովքը, ծոնված իր եղբոր սուրբ նահատակ Վահան Գողբնեցու հիշտակին<sup>10</sup>: Վահան Գողբնեցու կանոնը Շարակնոցում բաղկացած է հենց այդ մեկ շարականից<sup>11</sup>: Յայտնի է, որ ժամանակի ընթացքում հայկական ուրմասնյա հիմներգական կամոնից անջատվել է նրա 6-րդ երգը՝ «Մամկունք» կոչվող մասը (Սկզ. 112), որն ստացել է հնքնուրույն ժանրային տարատեսակի նշանակություն:

Մեր խորին համոզմաբ, ի սկզբան որպես աշխարհիկ ողբ հորինված խոսրովիդուխտի «Զարմանալի ի ինձ» երգը սկիզբ դրեց ինքնուրույն մի ավանդույթի և իր ակնառու երաժշտաբանաստեղծական արժանիքների շնորհիվ կանոնակարգվեց Եկեղեցու կողմից: Միանգամայն ակնհայտ է, թեև այդ մասին հատուկ ոչ մի տեղ չի նշվել, որ տվյալ երգասացության ժամրային պատկանելությունը «Մամկունք» տեսակին կատարվել է ավելի ուշ և պայմանական բնույթ է կրում: Սակայն երգասացության ցայտուն ծորերգայնությունը, նրա պատկանելությունը Դ կողմ ստեղին դարձան ավանդական նաև հետագայի հեղինակների համար, ովքեր դիմում էին այդ ժամրին:

Խոսրովիդուխտի Գովքին անդրադեմ են Ավետիքյանը,<sup>12</sup> Ալշանը<sup>13</sup> Քուշարյանը,<sup>14</sup> Թահմիզյանը,<sup>15</sup> Յակոբյանը<sup>16</sup> և ուրիշներ:

Շարականի ծայնեղանակային պատկանելության մասին Թահմիզյանը գրել է:

«... Դիտարկվող ստեղծագործությունը իր մեղեդիկով և եղակի տեղ է գրավում Շարակնոցում: Ոչ միայն Նիկողայոս Թաշճյանի, այլև Եղիա Տնտեսյանի կատարած ծայնագրությունների հանաձայն, այն կրում է ծայնեղանակային «Բձ» նշումը (...): Բայց ոչ մի կապ չունենալով ծայնեղանակների Ստեփանոս Սյունեցու (Երկորողի) Վերակարգավորված դրությամբ Ենթադրվող և Շարակնոցում Բձ նշումն ունեցող մյուս երգերի հետ, մասամբ առնչվում է Բձ կանոնագլուխներին, որոնք շատ ավելի հնուց են գալիս»:<sup>17</sup> Մեր կարծիքով, Գովքի ծայնեղանակային հորինվածքն, այնուայնայնիվ, ավելի մոտ է Դ կողմ ծայնեղանակի ոլորտին:

Տվյալ ծայնեղանակի ոլորտին դիմելու առումով մատնանշենք ավելի ուշ հեղինակների երգաստեղծության և մի քանի օրինակներ:

Պետրոս Գետաղարծ՝ շարական սր. Վարդանանց «Արիացեալք առ հակառակը»-Դկ և ստեղի:

Յովհաննես Սարակավագ՝ շարական սր. Յոհվասիմեանց «Անսկիզբըն քանը Աստուած» Յամբարձին, որը գրված է տողային այբբենական ակրոստիքոսի ձևով,

Ներսես Շնորհալի՝ շարական սր. Վարդանանց, «Նորահրաշ պըսակաւոր», գրված «Ներսեսի Երգ» ծայրակապով, Երկուսն էլ՝ Ոկ դարձվածք Եղանակում:

Այս օրինակները ներկայացնում են Դ դարձվածքի հորինվածքային իրականացման զանազան տարբերակները այլևայ շարականագիրների ստեղծագործության մեջ: Այս կապակցությամբ Ք. Քուշարյանը ժամանակին արժարժել է հերոսական սկզբի խնդիրը հայ հոգևոր երաժշտության մեջ: «Առաջինը, ինչ աչքի է զար-նում հայ հոգևոր երաժշտության հերոսական շերտերը քննելիս, - գրել է նա, - նրանց

տարաբնույթ լինելու է, ինչպես կերպարային բովանդակության, այնպես էլ հորինվածքի առանձնահատկությունների ինաստով։ Այստեղ և խստաշունչ-արխակի սաղմուերգություններն են, և հայրենիքի համար նահատակված Վարդան Մամիկոնյանի հիշատակին ձոնված հայտնի շարականի տիպի ծորերգային մոնողիաներն են, այստեղ և Պատարագի եզրափակիչ համարների տիպի չափաբերված քայլերգակերպ երգասացություններն են։ Հարց է ծագում, արդյո՞ք հերոսական սկիզբը հայոցներ երաժշտության մեջ ծագել է ինքնըստինքյան, իր իսկ եկեղեցու զարգացման արդյունքում, թե՞ ներթափանցել է այդ գործառույթի մեջ դրսից։ (...) Հաշվի առնելով բազմաթիվ դարերի ընթացքում ժողովրդական և ժողովրդամասնագիտացված երաժշտության հսկայական դերը եկեղեցու երաժշտության կազմավորման մեջ՝ առավել ևս պես է նտածել, որ եկեղեցական երաժշտության հերոսական ձևերն արդյունք են ժողովրդական երաժշտության համապատասխան ձևերի ընկալման»։ Չի բացառում, - գրել է Քուշնարյանն այնուհետև, - որ եկեղեցին յուրացընթացել է սաղմուերգային տիպի հերոսական երգասա-ցությունների ձևերը, որոնք բյուրեղագության մեջ։

Բացառված չեն նաև, որ առանձին դեպքերում եկեղեցին օգտագործել է նաև ռազմական երգերը<sup>18</sup>: Մասնավորապես, Խոսրովիդուխտի Գովքում առկա սեկվենտային քայլերը, որոնք «որոշ տարածում ունեն հայ միաձայնային երաժշտության ժողովրական ճյուղերում, խոր են հանգույս շրջանի հայ հոգևոր երաժշտությանը, որպես պարային համաշափ շարժումներից սերող ծևեր»: Այդ լույսի տակ Դ կողմ մաժորային դարձվածքի մոնողիաներում սեկվենտային հաջորդականությունների առկայությունը լրացուցիչ փաստարկ է այդ մոնողիաների աշխարհիկ ծագման օգտին (ընդգծումը մերն է - Ա.Ա.):»<sup>19</sup>: Վերջին եղրակացությունը հաստատում է մեր համոզմունքը Խոսրովիդուխտի Գովքի ի սկզբանե աշխարհիկ բնույթի վերաբերյալ:

Վերադառնալով Կը դարձվածի կիրաօնան քննությանը, նշեմք, որ վրաց երաժշտագետ-միջնադարագետ Մանանա Անդրիհածեի հետ ունեցած զրույցից պարզվեց, որ վրացական օրիներգության մեջ ազգային սրբերին և մարտիրոսներին նվիրված երգասացությունները, որպես կանոն, նույնական ծավալվում են Չորրորդ ծայնեղանակի ոլորտում: Ուշագրավ մի առանձնահատկություն, որը ենթադրել է տալիս, որ այդ ավանդույթը, հավանաբար, սերում է բյուզանդական իիմներգությունից և առկա է նաև ատիպ իիմներգական հուշարձանների տարրեր եկեղեցիների երաժշտական ավանդույթները ներկայացնող առանձին համեմատական ուսումնասիրության համատեքստում:

Գրականություն

- 1 Степанян, Г. А. Армянские жития и мученичества (V-XII вв.), перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, Е., 1995.
  - 2 Ազարանգեղայ Պատմութիւն հայոց. ըննական բնագիրը Գ. Տեր-Սկրտչյանի և Ա. Կանայյանցի, Ե., 1983, էջ 428-432:
  - 3 Степанян, Г. А. Армянские жития и мученичества (V-XII вв.), перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, Е., 1995, էջ 35; Ն. Թահիմյան, Մովսես Սյունեցին և նրա «Յաղագ կարգաց» գրվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, թիվ 11, էջ 91: Степанян, Г. А. Армянские жития и мученичества (V-XII вв.), перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, Е., 1995, էջ 35; Ն. Թահիմյան, Մովսես Սյունեցին և նրա «Յաղագ կարգաց» գրվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, թիվ 11, էջ 91: Степанян, Г. А. Армянские жития и мученичества (V-XII вв.), перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, Е., 1995, էջ 35; Ն. Թահիմյան, Մովսես Սյունեցին և նրա «Յաղագ կարգաց» գրվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, թիվ 11, էջ 91: Տեղական մեր հոդվածը՝ Դայ միջնադարյան «Ճայ-նից» մեկնությունները և Մովսես Սյունեցու «Յաղագ կարգաց եկեղեցւոյ» գրվածքը, «Ճայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Ե., 2002, էջ 204:
  - 4 Степанян, Г. А. «Deux textes arméniens attribués à Basile de Césarée sur l'Interprétation des modes musicaux», «Revue des études arméniennes» (REArm), 26, 1996-

1997, p. 352

- 5 Տես Մատոնցի անվան Մատենադարան, ձեռ. 6031, 1404թ. էջ 183ա-184թ: Տես նաև մեր հոդվածը «Les traités arméniens médiévaux sur l'interprétation des modes musicaux et leurs parallèles au Proche Orient», REArm, 26, 1996-1997, թ. 360-361:

6 Տես **Հ. Տագմիզյան**, Դավտակ Կերտօց - видный поэт-мелод раннесредневековой Армении, в кн. Դավտակ Կերտօց, Плач на смерть великого князя Джеваншира, древнеармянский оригинал и переводы на современный армянский, русский, английский, французский, немецкий, испанский, польский языки. Составление, предисловие и комментарии **Լ. Մկրտչյան**, Е., с. 272.

7 **Սովորես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, բնական բնագիրը և ներածությունը Վ. Սոաբելյանի, Ե. 1983, էջ 221-225:

8 Նույն տեղում, էջ 225-230:

9 **Թովմայ Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 297-298: Պատմություն Արծրունյաց տան, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Ե., 1999, էջ 171-172:

10 Տես Հոգևոր Երգեր, կազմեց և խմբագրեց Ա. Արևշատյանը, Ե., 1998, էջ 51-55:

11 Ուսւ ուղղափառ եկեղեցու պաշտոներգության մեջ նման Երգերը ստացել են однопесенец անվանումը:

12 **Գ.Ավետիքյան**, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 591-593:

13 **Դ. Ալիշան**, Ցուշիկը հայրենեաց հայոց, հ. Բ. Վենետիկ, 1921, էջ 115, 178:

14 **Խ. Ս. Կոշինարես**, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, сс. 115-513.

15 **Ն. Թահիմիջյան**, Գրիգոր Նարեկացին և հայ Երաժշտությունը V-XV դարերում, Ե., 1985, էջ 194, տես նաև նույնի, Տеория музыки в древней Армении, Е., 1977, с. 83-84, 276-278.

16 **Գր. Դակորյան**, Շարականների ժամը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XVդդ.) Ե., 1980, էջ 167-171: Տվյալ հեղինակը փորձել է ապացուցել, որ Կահան Գողբնեցու շարականը հորինել է ոչ թե խոսրովվիդուխտը, այլ Ստեփանոս Սյունեցու քույրը՝ միանձնուիկի Սահակաղուխտը, որի մասին իր Եղբոր Վարդում (տես **Գ. Յովսեփեան**, Մխիթար Այրիվանեցի, նորագիւտ արձանագրութիւն և Երկեր, Երուսաղեմ, 1913, էջ 18-19) և այլ պատմական աղբյուրներում հիշատակություններ կան որպես շնորհաշատ բանաստեղծութեալ և Երգասացի Վերաբերյալ, որը հեղինակել է բազմաթիվ հոգևոր Երգեր, նվիրված սր. Ծննդյան և Աստվածածնի ննջման տոններին: Սր. Աստվածածնին նվիրված մեկ շարականի բանաստեղծական բնագիրը պահպանվել է: Նրա ծայրկապը հողում է «Սահակաղուխտ» անունը և սկսվում է «Միքուիկ Մարիամ» բառերով: Սակայն, ընդհանուր առմանք, այդ տեսակենտր չարժանացավ աջակցության և տարածման:

17 **Ն. Թահիմիջյան**, Գրիգոր Նարեկացին և հայ Երաժշտությունը V-XV դդ., էջ 194:

18 **Կոշինարես**, սկզբ. սույն և սկսվում է «Միքուիկ Մարիամ» բառերով: Սակայն, ընդհանուր առմանք, այդ տեսակենտր չարժանացավ աջակցության և տարածման:

19 Նույն տեղում, էջ 513: